ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 8-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ԹԻՎ 3-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում պետական հաշվառման ժամանակ տրակտորների, ինքնագնաց շասսիների և տրակտորային կցանքների, ինքնագնաց գյուղատնտեսական մեքենաների համար տրվող տեխնիկական վկայագրի ձևը, գյուղատնտեսական տեխնիկան հաշվառելու

(վերահաշվառելու, հաշվառումից հանելու) համար ներկայացվող դիմումի ձևը, տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայական ստանալու, վարման իրավունքի կարգի փոփոխման, վարման իրավունքի վկայականի փոխանակման և կրկնօրինակի տրամադրման համար ներկայացվող դիմումի ձևը, տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականների տրամադրման նպատակով անցկացվող տեսական քննության հարցաշարը, տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականների տրամադրման որակավորման տարածքային հանձնաժողովների կազմն ու կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 3-Լ հրամանով հաստատված 6-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը ծանոթացնել իրավասու ծառայությունների պետերին:

Ոստիկանության գեներալ-մայոր ***Ա.Հովհաննիսյան***

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ

03. 11. 2024թ